

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ վիճակը, իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

1. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, նույն օրենքով, այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով: Մինչույն ժամանակ, նույն հոդվածով նախատեսվում է, որ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին, որով սահմանվել են/կարգավորվել են Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները: Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է, որ Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են նույն օրենքով և այլ օրենքներով: Երևանում տեղական ինքնակառավարման հետ կապված նույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այնքանով, որքանով դրանք չեն հակասում նույն օրենքին:

Ընդունման պահից մինչ այսօր Օրենքում կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք սակայն, ամբողջապես չեն ապահովում Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման արդյունավետ իրականացումը:

Հաշվի առնելով Օրենքում նախատեսվող փոփոխությունների ծավալը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ Նախագծերի փաթեթով առաջարկվում է Օրենքն ամբողջությամբ շարադրել նոր խմբագրությամբ, որի արդյունքում Օրենքում գործող կարգավորումները կհամապատասխանեցվեն գործող օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին, ինչպես նաև կնախատեսվեն նոր կարգավորումներ, այդ թվում՝ կվերանայվեն Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, որոնք ուղղված կլինեն Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների առավել արդյունավետ լուծմանը: Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունները առավելապես միտված են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող

գործունեության ընթացքում տարբեր բնագավառներում գործնականում առաջացող խնդիրների լուծմանը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է կատարվել մի շարք փոփոխություններ, որոնք վերաբերվում են հետևյալ հարցերին.

- Նախագծով նախատեսվում է վերանայել Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի լիազորությունները: Մասնավորապես ի լրումն Օրենքում ամրագրված համայնքի ավագանու լիազորությունների՝ Նախագծով նախատեսվում է սահմանել, որ Երևան քաղաքի ավագանին՝

- սահմանում է Երևանի վարչական տարածքում տրանսպորտային միջոցների շահագործման, բեռնափոխադրման (այդ թվում՝ շինանյութի) և մատակարարման կազմակերպման լրացուցիչ պահանջները, պայմանները, սահմանափակումները.

- սահմանում է Երևանում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կարգը, պայմանները, սահմանափակումները, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների թույլատրվող տեսակները.

- սահմանում է Երևանի խորհրդանիշների օգտագործման կանոնները և պահանջները, ինչպես նաև դրանց պարտադիր օգտագործման դեպքերը և կարգը.

- սահմանում է Երևանի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) ուղեփակոցների և արգելափակոցների տեղադրման կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները.

- սահմանում է Երևանի վարչական տարածքում գտնվող շենքերի, շինությունների արտաքին պատերին, այդ թվում՝ դիմային (ճակատային) հատվածում և տանիքին՝ սարքերի, սարքավորումների, այդ թվում՝ արևային կայանների, դեկորատիվ առարկաների և այլ պարագաների ու տարրերի տեղադրման կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները.

- սահմանում է համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցներ իրականացրած անձանց սեփական նախաձեռնությամբ դրանց քանդման (ապամոնտաժման) դեպքում քանդման ծախսերի իրականացման համար օժանդակության տրամադրման չափը և կարգը.

- սահմանում է համայնքի վարչական տարածքում ավագանու կամ քաղաքապետի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա (առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման) պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման թույլատրելի դեպքերը, կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները.

- և այլ լիազորություններ:

Երևան քաղաքում և մյուս համայնքներում շատ տնտեսվարողներ իրենց գործունեությունն իրականացնում են ավտոմատ սարքավորումների միջոցով, մինչդեռ

ներկայումս «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով կարգավորված չեն համայնքի տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու հետ կապված իրավահարաբերությունները:

Նշված ոլորտի կարգավորված չլինելու արդյունքում նշված գործունեությունը դուրս է մնացել որևէ հսկողություն իրականացնելու հնարավորությունից, իսկ տնտեսվարողների կողմից ցանկացած վայրում սարքավորումներ տեղադրելը առաջացնում է համայնքի բնակիչների և մյուս տնտեսվարողների դժգոհությունը:

Նշված ոլորտը կարգավորելու և մյուս տնտեսվարողների միջև հավասար պայմաններ ապահովելու նպատակով Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանուն վերապահել համայնքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կարգը, պայմանները, սահմանափակումները, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների թույլատրվող տեսակները սահմանելու հնարավորություն, իսկ Երևանի տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգին, պայմաններին, սահմանափակումներին համապատասխան, ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու թույլտվություն տալու լիազորությունը վերապահել Երևանի քաղաքապետին:

Նախագծով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են նաև Երևան քաղաքի վարչական տարածքում բեռնափոխադրումները, այդ թվում նաև՝ շինանյութի, և մատակարարման կազմակերպումը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

Ներկայումս նման կանոնակարգման բացակայությունը խաթարում է քաղաքի բնականոն գործունեությունը, խոչընդոտ հանդիսանում երթևեկության անվտանգ և անխափան իրականացման համար:

Տրանսպորտային անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի հիմնական բաղկացուցիչներից է, որը ենթադրում է տրանսպորտային անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ստեղծում և դրանից բխող համապատասխան միջոցառումների ձեռնարկում: Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման բնագավառի որոշ գործառույթներ բաշխված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է գործառույթներ՝ ուղղված տրանսպորտի ոլորտում համակարգային բարեփոխումների արդյունավետ իրականացման համար: Չնայած վերջին տարիներին մայրաքաղաքում իրականացված լայնածավալ բարեփոխումներին, այդուհանդերձ, ձեռնարկված միջոցառումները համարժեք չեն աննախադեպ աճ գրանցած ավտոտրանսպորտի պահանջարկին, որի արդյունքն էլ այսօր մայրաքաղաքում օրեցօր ավելացող խիտ երթևեկությունն է՝ հատկապես առավոտյան և երեկոյան ժամերին:

Կարելի է փաստել, որ այսօր պետության առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից մեկը քաղաքում օրեցօր ավելացող խցանումների թվաքանակի

կրճատումն է, որոնք հաճախ կաթվածահար են անում քաղաքի բնականոն գործունեությունը և երբեմն կիրմետրերով ձգվող խցանումների հետևանքով մարդիկ ստիպված են քաղաքի մի մասից մյուսը հասնելու համար ժամերով սպասել: Տրանսպորտի ոլորտում առաջացող հիմնախնդիրները մեծ թվով պայմանավորված են նաև տրանսպորտային հոսքերում ծանրաքարշ բեռնատար տրանսպորտային միջոցների թվի կտրուկ աճով, որոնք ինքնին խոչընդոտ են հանդիսանում քաղաքում անխափան և անվտանգ երթևեկության ապահովման համար:

Նշված հիմնախնդիրների կանոնակարգման նպատակով՝ Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանուն վերապահել լիազորություն՝ սահմանելու Երևան քաղաքի վարչական տարածքում բեռնափոխադրման, այդ թվում նաև՝ շինանյութի կազմակերպման պահանջները, պայմանները, սահմանափակումները, ինչպես նաև սահմանել լրացուցիչ պահանջներ մատակարարման կազմակերպման համար:

Նախագծերի փաթեթով նախատեսվում է կանոնակարգել նաև Երևանի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) ուղեփակոցների և արգելափակոցների տեղադրման կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները, սահմանել Երևանի վարչական տարածքում գտնվող շենքերի, շինությունների արտաքին պատերին, դիմային (ճակատային) հատվածում և տանիքին՝ սարքավորումների, այդ թվում՝ արևային կայանների և այլ պարագաների տեղադրման կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները, քանի որ հիշյալ կարգերի նորմատիվ իրավական կարգավորման բացակայությունը հանգեցնում է Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների արտաքին պատերին, դիմային (ճակատային) հատվածում և տանիքին տարբեր սարքավորումների, կայանների և այլ պարագաների չնորմավորված տեղադրմանը, ինչի արդյունքում էլ խաթարվում է քաղաքի ճարտարապետական, քաղաքաշինական-գեղագիտական տեսքը, ինչպես նաև հանգեցնում է քաղաքացիների կողմից ինքնիրավ գործողությունների կատարմանը՝ խաթարելով համայնքի և համայնքի բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896 որոշմամբ սահմանված է ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգն ու պայմանները, սակայն այդ որոշմամբ կարգավորված չեն հողամասի տրամադրման հետ կապված հարաբերությունները: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ՀՀ հողային օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ, ըստ որի՝ հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված են նաև հողամասերն առանց մրցույթի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքերը: Ներկայումս ոչ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և ոչ էլ հիշյալ իրավական ակտերով

կարգավորված չեն համայնքի վարչական տարածքում ավագանու և համայնքի ղեկավարի, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման հետ կապված հարաբերությունները, ինչի արդյունքում Երևան համայնքի վարչական տարածքում համայնքի ավագանու և Երևանի քաղաքապետի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա (առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման) պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման հետ կապված առաջանում են մի շարք խնդիրներ, որոնք առկա են նաև մյուս համայնքներում:

Հաշվի առնելով նշվածը՝ Նախագծերի փաթեթով առաջարկվում է կարգավորել նաև Երևան համայնքի վարչական տարածքում ավագանու և քաղաքապետի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա (առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման) պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման հետ կապված հարաբերությունները: Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի տիրապետման իրավունքը համայնքի վարչական տարածքում համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա՝ առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման՝ հողամասը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է, որը դադարում է համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից կայացրած՝ հողամասի փաստացի տիրապետման համար հիմք հանդիսացած վարչական ակտերի գործողության ժամկետի ավարտման պահից:

Նախագծով Երևան քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների կառուցումը կանխարգելելու, նվազեցնելու և արդեն իսկ կառուցված ինքնակամ կառույցների քանդման ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ սահմանված նպատակին հասնելու համար՝ Նախագծով առաջարկվում է Երևանի քաղաքապետին վերապահել լիազորություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում կառուցված և չօրինականացված ինքնակամ շինությունների կամ օրինական գույքերին կից ինքնակամ կառուցված և չօրինականացված հատվածների քանդման նպատակով ներկայացնելու այդ շինությունների քանդման գրավոր պահանջներ, այդ թվում՝ բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերում: Միևնույն ժամանակ, Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանուն վերապահել լիազորություն՝ սահմանելու համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցներ իրականացրած անձանց սեփական նախաձեռնությամբ դրանց քանդման (ապամոնտաժման) դեպքում քանդման ծախսերի իրականացման համար օժանդակության տրամադրման չափը և կարգը:

Նախագծով առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանցից բացի, նախատեսել նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական աշխատանք կատարող անձանց, ինչպես նաև փոփոխել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ նախատեսելով, որ քաղաքապետարանի աշխատակազմն ունի կառուցվածքային (դեպարտամենտ, վարչություն, քարտուղարություն, բաժին, ծառայություն) և առանձնացված (վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ) ստորաբաժանումներ, նախատեսել, որ Երևանի քաղաքապետը կարող է ունենալ խորհրդականներ, այդ թվում՝ հասարակական հիմունքներով, օգնականներ և մամուլի քարտուղար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը պետք է լինի ավագանու անդամ, ինչպես նաև նկատի ունենալով ավագանու լիազորությունների ժամկետի ավարտի վերաբերյալ կարգավորումները՝ Նախագծով առաջարկվում է նախատեսել, որ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի լիազորությունները դադարում են նորընտիր քաղաքապետի կողմից լիազորությունները ստանձնելու պահից:

Նախագծով առաջարկվում է վերանայել նաև Երևանի քաղաքապետի լիազորությունները, առավելապես գործող օրենսդրությամբ վերապահված առանձին լիազորությունների պատշաճ իրականացման նպատակով նախատեսվում է ընդլայնել Երևանի քաղաքապետի լիազորությունները հասարակական կարգի պահպանության բնագավառում, նախատեսելով, որ Երևանի քաղաքապետը հասարակական կարգի պահպանության բնագավառում՝

1) հետևում է համակեցության կանոնների պահպանմանը.

2) հետևում է ավագանու հաստատած կարգերի, պայմանների, պահանջների, սահմանափակումների և կանոնների պահանջների պահպանմանը.

3) վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում վարչական պատասխանատվության է ենթարկում վարչական իրավախախտում կատարած անձանց և օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում այդ իրավախախտումների կանխարգելման, նվազեցման, կանխման և բացահայտման համար.

4) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով նախատեսված շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու հիմքերի առկայության դեպքում իրավասու է շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխել հատուկ տարածք.

5) իրավասու է ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնելու Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ), վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը, առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման

նպատակի խախտմամբ իրականացվող գործունեության վայրի շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը, ընդ որում՝

ա. դադարեցումն առաջին անգամ կարող է իրականացվել 5 օր ժամկետով, երկրորդ անգամ՝ 10 օր ժամկետով, երրորդ և հաջորդ բոլոր դեպքերում՝ 1 ամիս ժամկետով.

բ. սույն մասով սահմանված լիազորությունների իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ համապատասխան վարչական ակտը ընդունվում է Երևանի քաղաքապետի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ առանց լսումներ իրականացնելու, որով կարող է նախատեսվել, որ համապատասխան ագրեգատը, շենքը, շինությունը կամ այլ օբյեկտը կարող են կապարակնքվել (կնքվել):

6) իրավասու է առգրավելու.

ա. վարչական իրավախախտման կատարման ընթացքում օգտագործվող (վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող) և վարչական իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաները.

բ. Երևանի վարչական տարածքում, այդ թվում՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի և շինությունների արտաքին պատերին, այդ թվում՝ դիմային (ճակատային հատվածում) կամ տանիքին՝ ավազանու սահմանած կարգի, պահանջների, պայմանների, սահմանափակումների խախտմամբ կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ տեղադրված սարքերը, սարքավորումները (այդ թվում՝ արևային կայանները), դեկորատիվ առարկաները, այլ պարագաններն ու տարրերը (արտաքին գովազդի տեղաբաշխման միջոցներ, կանգնակներ, հովանոցներ, ծածկոցներ և այլն).

գ. սույն կետով նախատեսված առգրավումն անհրաժեշտության դեպքում կատարվում է տեխնիկական միջոցների կիրառմամբ, այնպես, որ առգրավվող առարկային պատճառվի նվազագույն վնաս, իսկ առգրավման ամբողջ գործընթացը տեսանկարահանվում է և կազմվում է առգրավման վերաբերյալ արձանագրություն: Առգրավված գույքի վերադարձման կարգը սահմանում է ավազանին.

7) իրավասու է Երևանի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) համայնքի կողմից հայտնաբերված դեն նետված գույքը կամ դեն նետված մետաղների ջարդոնը, խոտանված արտադրանքը, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ առաջացած լցակույտերը, արտադրական և այլ թափոնները տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք.

8) իրականացնում է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պահպանություն.

9) իր իրավասության շրջանակներում ապահովում է փողոցներում կամ այլ ընդհանուր օգտագործման տարածքներում երթևեկությունը սահմանափակելու կամ արգելելու որոշումների կատարումը:

10) իրավասու է գրանցելու, լուսանկարելու, ձայնագրելու, տեսանկարահանելու ենթադրյալ վարչական իրավախախտում կատարած անձանց՝ նրանց ինքնությունը պարզելու կամ նույնացում կատարելու նպատակով, իր գործունեությունն արձանագրելու նպատակով օգտագործելու տեղեկատվական համակարգեր, տեսաձայնագրման, լուսանկարահանման սարքավորումներ, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցներ:

Նախագծով նախատեսվում է, որ քաղաքապետի վերոգրյալ լիազորությունները իրականացվում են աշխատակազմի ստորաբաժանումների և Երևանի հասարակական կարգի պահպանության մունիցիպալ ծառայության միջոցով: Երևանի քաղաքապետը նույն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում և դրանց իրականացումն ապահովելու նպատակով փոխադարձության սկզբունքով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով անհատույց և ազատ առցանց հասանելիություն է ստանում պետական կառավարման համակարգի մարմինների մոտ գտնվող էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին, համակարգերին և տեղեկություններին:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում Երևանի քաղաքապետի լիազորությունների վերանայման և նոր գործիքակազմերի մշակման համար հիմք են հանդիսացել նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի գրությունները՝ միջոցներ ձեռնարկելու հասարակական կարգի պահպանության բնագավառում Երևանի քաղաքապետի լիազորությունների վերանայման և նոր գործիքակազմերի մշակման համար, այդ թվում՝ միջոցներ ձեռնարկելու առկա օրենսդրական բացը լրացնելու համար, որպեսզի համապատասխան մարմինը իրավասություն ունենա կասեցնելու կամ դադարեցնելու առանց թույլտվության գործող՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեությունը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների դրույթներով սահմանափակվում է Երևանի կողմից վարկային կամ պարտատոմսերի թողարկմամբ այլ փոխառու միջոցներ ներգրավելու հնարավորությունը, որով պայմանավորված ստեղծվում են լրացուցիչ խոչընդոտներ՝ փոխառու ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու և համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող սոցիալական ենթակառուցվածքներին ուղղված ծրագրեր իրականացնելու համար, որից ելնելով առաջանում է օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

Երևանի քաղաքապետարանը ունի չափավոր ֆինանսական անկախություն Եվրոպական համանման քաղաքների հետ համեմատ: Քաղաքապետարանը ունի շատ փոքր անկախություն հարկային դրույքաչափերի կամ հարկային բազայի փոփոխության և նոր հարկատեսակների ներկայացման մեջ, ինչը նվազեցնում է նոր եկամտի

աղբյուրներ ստեղծելու և եկամուտները բարձրացնելու քաղաքապետարանի ունակությունը:

Ներկայիս օրենսդրությունը թույլ չի տալիս քաղաքապետարանին ներգրավել զգալի փոխառություններ: Ներգրավվող փոխառությունների սահմանաչափը բարձրացնելու նպատակով՝ առաջարկվում է փոփոխել փոխառու միջոցներ ներգրավելու ընթացակարգը և բյուջետային գործընթացը:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է հաշվի առնելով Երևանի կարգավիճակը՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների որոշ դրույթներ չտարածել Երևանի վրա, այլ օրենքի դրույթներով կարգավորել Երևանի կողմից փոխառու միջոցների ներգրավման և բյուջետային գործընթացի ընթացակարգերը, միաժամանակ Երևանի վարկունակության գնահատման համար օգտագործելով միջազգային պրակտիկայում ընդունված սեփական եկամուտների դրույթը (տես՝ Improving local government's capacity: The Experience of Municipal Finances Self Assessment in South East Europe, The World Bank Institute), ընդ որում ներգրավող փոխառու միջոցների սահմանաչափ սահմանելիս առաջարկվում է օգտագործել փոխառու միջոցի սպասարկում/սեփական եկամուտներ հարաբերակցությունը: Այս առումով ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը:

Խորվաթիա - Համայնքային բյուջեի կարճաժամկետ փոխառությունների համար Խորվաթիայի կառավարության համաձայնությունը պարտադիր չէ: Իսկ երկարաժամկետ ծրագրերի համար, ինչպես նշում է Խորվաթիայի բյուջեի մասին օրենքը, տեղական ինքնակառավարման մարմինները կարող են փոխառություններ ստանալ վարկային գծի, վարկերի և արժեթղթերի թողարկման շնորհիվ, սակայն՝ կառավարության նախնական համաձայնությամբ: Կառավարությունը թողարկում է երաշխիքներ, ըստ որոնց ընդունում է փոխառության մարման պարտականությունը, եթե տեղական ինքնակառավարման մարմինը չկարողանա կատարել մայր գումարի մարումները: Նույն օրենքում ամրագրված կարգավորումների համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը հայտ է ներկայացնում Ֆինանսների նախարարություն: Ավելին, վերջինս եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում նախորդ ժամանակաշրջանում վարկի մարման վերաբերյալ: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են վարկ վերցնել միայն այն պարագայում, երբ նրանց նախորդ տարվա գործառնական եկամուտներն ավելի շատ են եղել, քան ծախսերը: Տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր տարեկան վարկի սպասարկման պարտավորությունները չեն կարող գերազանցել վարկի ձեռքբերման նախորդ ժամանակաշրջանում հավաքագրված եկամուտների 20%-ը:

Ուկրաինա- Ուկրաինան համայնքային վարկավորման երկու մեխանիզմ ունի, մեկը՝ քաղաքապետարանին ուղղակի տրամադրվող վարկերն են, մյուսը՝ քաղաքապետարանին պատկանող կազմակերպությունների վարկավորումը՝ քաղաքապետարանի երաշխիքի ներքո: Երաշխիքի թողարկման համար պատասխանատու է քաղաքի ավագանին: Միննույն ժամանակ, տեղական երաշխավորությունների պայմանները և ժամկետը պետք է համաձայնեցվեն Ֆինանսների նախարարության հետ: Ֆինանսների նախարարությունից առարկություն

չստանալու, և գրանցվելու համար քաղաքապետարանը պետք է ներկայացնի գրավոր դիմում՝ փաստաթղթերի փաթեթի հետ միասին: Ֆինանսների նախարարությունը ստուգում է դրանց համապատասխանությունը Ուկրաինայի բյուջետային օրենսդրության և Ուկրաինայի ազգային բանկի լրացուցիչ պահանջներին, և որոշում է կայացնում համայնքային երաշխիքի գումարի և ժամկետների հաստատման մասին, կամ հրապարակում է հիմնավորված մերժում:

Մոլդովա - Մոլդովայում կառավարության հաստատումը պարտադիր չէ, մասնավորապես, պետական պարտքի մասին օրենքը նշում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են երկարաժամկետ, կարճաժամկետ վարկեր վերցնել կամ պարտատոմսեր թողարկել կապիտալ ծախսումների համար՝ կախված համապատասխան մարմինների որոշումից: Օրենքը սահմանում է նաև, որ կառավարությունը կարող է հանդես չգալ որպես վարկի մարման երաշխավոր, և վարկային պայմանագրում մայր գումարի և տոկոսային մարումները կատարվում են սեփական հարկային եկամուտներից: Ընդ որում, կապիտալ ներդրումները ֆինանսավորող երկարաժամկետ փոխառության մայր գումարի մնացորդը չպետք է գերազանցի տարեկան ընդհանուր եկամուտների 20% -ը, իսկ կարճաժամկետ փոխառությանը՝ նույն գումարի 5%-ը:

Բուլղարիա- Ինչպես նշված է Բուլղարիայի պետական պարտքի մասին ակտում, քաղաքապետարանների պարտավորությունները չպետք է երաշխավորվեն կառավարության կողմից և չպետք է համարվեն կառավարության պարտավորություն (բացի հատուկ ընթացակարգերով թողարկված երաշխիքների):

Սակայն, ֆինանսների նախարարությունը Կենտրոնական քաղաքային պարտավորությունների գրանցամատյանում վարում է յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմնի վերաբերյալ առանձին գրառումներ և վերանայում է դրանք յուրաքանչյուր ամիս: Այդ գրանցամատյանն ունի երեք ենթահաշիվ՝ վարկերի, պարտատոմսերի և երաշխիքների համար:

Վարկի տարեկան սպասարկումը չի կարող գերազանցել նախորդ տարվա աուդիտ անցած հաշվետվությամբ հաստատված սեփական եկամուտների և համահարթեցման սկզբունքով տրամադրված սուբսիդիաների 25%-ը, իսկ թողարկված համայնքային արժեթղթերի ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել նույն գումարի 5%-ը: Համայնքային պարտավորությունները ներառված են Կառավարության պարտքի մեջ, որը չի կարող գերազանցել ՀՆԱ 60%-ը:

Ալբանիա- Ալբանիայի ֆինանսների նախարարությունը հաստատում է քաղաքապետարանների փոխառությունները, որի համար կան երկու գործընթացներ. երբ քաղաքապետարանը փոխառություն է վերցնում ներքին շուկայում, և երբ ֆինանսավորվում է արտաքին շուկայից: Միջազգային շուկայից փոխառություն վերցնելու դեպքում ֆինանսների նախարարությունը պետք է իր վերջնական համաձայնությունը տա, իսկ ներքին շուկայից փոխառության դեպքում, ֆինանսների նախարարության հաստատումը որոշիչ է միայն, եթե տեղական ինքնակառավարման մարմինը վարկի մարման խնդիրներ է ունեցել նախորդ հինգ տարիների ընթացքում: Նախարարությունը ստուգում է ընթացակարգերի համապատասխանություն

օրենքներին, որտեղ նշվում է, որ վարկի գումարի և վերականգնվող եկամուտների հարաբերությունը պետք է նվազ լինի 1.3:1 հարաբերակցությունից: Միևնույն ժամանակ, երկարաժամկետ վարկի սպասարկման ամենամյա գումարը չի կարող լինել քաղաքապետարանի ընդհանուր իրական եկամուտների 20%-ից ավել:

Հյուսիսային Մակեդոնիա- Մակեդոնիայի քաղաքապետարանների համար պարտադիր է տեղական փոխառության համար կառավարության հաստատումը: Նախարարության եզրակացության հիման վրա քաղաքապետարանները կարող են վարկ վերցնել միայն կառավարության վերջնական համաձայնությամբ: Միջազգային կազմակերպություններից ստացված վարկային գծերը ներգրավվում են որպես պետական պարտք, սակայն ԵՄ գործընկերություն ձեռք բերելու նպատակով երկրում ընթացքի մեջ է ֆիսկալ ապակենտրոնացումը և քաղաքապետարաններին անկախության որոշակի մակարդակ տրամադրելու գործընթացը:

Երկարաժամկետ համայնքային փոխառությունների՝ ներառյալ բոլոր երաշխիքների, մնացորդները չեն կարող գերազանցել նախորդող տարվա վարչական բյուջեի եկամուտները: Տարեկան վարկի սպասարկման գումարը չի կարող գերազանցել նախորդող տարվա վերականգնվող եկամուտների 30%-ը:

Ղազախստան - Ղազախստանն ունի կենտրոնացված և ունիտար ֆինանսական համակարգ, տեղական փոխառությունների խիստ վերահսկողությամբ: Ըստ ՏՀՀԿ18 զեկույցներից մեկի, միայն մարզերը և մարզի կարգավիճակ ունեցող քաղաքապետարաններն (Ալմաթի և Աստանա) են լիազորված թողարկել պարտատոմսեր: Ֆինանսների նախարարությունը պետք է հաստատի տեղական պարտատոմսերը, փոխառության նպատակը և տոկոսադրույքը, և դրանք պետք է արտացոլվեն պետական բյուջեում: Սրա համար անհրաժեշտ է ունենալ վարկանշային հաշվետվություն: Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են միայն վարկն օգտագործել որպես արտաքին ֆինանսավորման գործիք, ավելին, Ղազախստանի կառավարությունը չի երաշխավորում իր կողմից վարկի սպասարկման և մայր գումարի մարումները, եթե տեղական ինքնակառավարման մարմինը չի կարող ժամանակին վճարումներ կատարել:

Տեղական ինքնակառավարման մարմինների փոխառությունները չեն կարող գերազանցել բյուջետային եկամուտների 75%-ը, իսկ վարկային միջոցների տարեկան սպասարկումը չի կարող գերազանցել նույն գումարի 10%-ը: Սակայն, սահմանափակումները չեն կիրառվում տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող իրավաբանական անձանց վրա և ֆինանսական հաստատությունն է պատասխանատու նման կազմակերպության վարկունակությունը ստուգելու համար:

Լեհաստան - Տեղական ինքնակառավարման մարմիններին անկախությունը շնորհված է Լեհաստանի սահմանադրությամբ և տեղական փոխառություններ ներգրավելու համար կառավարության կողմից հաստատում չի պահանջվում: Մինչ վերջերս, տեղական ինքնակառավարման մարմինների պարտքը սահմանափակվում էր եկամուտների 60%-ով, իսկ պարտքի սպասարկումը պետք է ցածր լիներ տարեկան եկամուտների 15%-ից: Տեղական ինքնակառավարման մարմինների պարտքի սահմանաչափը սահմանվում է յուրաքանչյուր տեղական մարմնի համար առանձին:

Այնուամենայնիվ, պարտքի սպասարկման ծախսերը՝ ներառյալ սպասարկման ծախսերը և երաշխիքները, չեն կարող գերազանցել հիմնական միջոցների վաճառքից ստացվող եկամուտների մեկ երրորդը:

Լեհաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման ամենատարածված գործիքը համայնքային պարտատոմսերն են, որը սկսել է զարգանալ 1990-ականներին: Լեհաստանում «Կատալիստ» համակարգի առկայությունը թույլ է տալիս համայնքային պարտատոմսերի առևտուր իրականացնել տեղական և միջազգային ներդրողներին:

Թուրքիա - Թուրքիայում համայնքի կողմից փոխառություն ներգրավելու համար կառավարության վավերացում չի պահանջվում: Տեղական վարկերը, որոնք չեն գերազանցում նախորդ տարվա եկամուտների 10%-ը վավերացվում են համայնքի ավագանու կողմից: Եթե գումարը մեծ է 10%-ից, ապա անհրաժեշտ է նաև Ներքին գործերի նախարարության հաստատումը: Արտաքին ֆինանսավորման դեպքում, «Ֆինանսների և կառավարման» օրենքը և «Արտաքին ֆինանսավորման» կարգավորումներն են կիրառվում: Ինչպես նաև անհրաժեշտ է Զարգացման նախարարության և Գանձապետարանի վավերացումը:

Պարտատոմսերի թողարկումը նույնպես հնարավոր է Թուրքիայի քաղաքապետարանների կողմից, որոնք նույնպես անցնում են Գանձապետարանի կողմից վավերացում: Նրանք պետք է ներկայացնեն հայտ՝ որոշակի փաստաթղթերի ցանկով՝ կառավարվելով «Պարտատոմսերի թողարկման» կանոնակարգով:

Երկիր	ՖՆ հաստատում	Փոխառությունների սահմանափակում
Խորվաթիա	Այո	Վարկի տարեկան սպասարկում - 20% փաստացի եկամուտների
Ուկրաինա	Այո	Ընդամենը փոխառությունը - 200% կապիտալ բյուջեի Վարկի տարեկան սպասարկում - 10% ընդամենը եկամուտների
Մոլդովա	Ոչ	Ընդհանուր երկարաժամկետ փոխառությունը - 20% ընդամենը եկամուտների Ընդհանուր կարճաժամկետ փոխառությունը - 5% ընդամենը եկամուտների
Բուլղարիա	Ոչ	Վարկի տարեկան սպասարկում - 25% նախորդ ֆինանսական տարվա սուբսիդիաների Ընդամենը փոխառությունը (ներ. Կառավարության պարտքը) - 60%

		ՀՆԱ-ի
Ալքանիա	Այո	Վարկի տարեկան սպասարկում – 20% վերականգնվող եկամուտների
Հ. Մակեդոնիա	Այո	Վարկի տարեկան սպասարկում – 30% վերականգնվող եկամուտների
Ղազախստան	Այո	Ընդամենը փոխառությունը – 75% ընդամենը եկամուտների Վարկի տարեկան սպասարկում – 10% ընդամենը եկամուտների
Թուրքիա	Ոչ	Ընդամենը փոխառությունը – 10% ընդամենը եկամուտների

Նախագծով առաջարկվում է կարգավորել նաև Երևանի հանդեպ առկա գումարային պարտավորությունների հաշվառման և Երևանի հանդեպ առկա գումարային պարտավորությունների իրականացման կարգը, մասնավորապես՝ Նախագծով առաջարկվում է նախատեսել, որ Երևան համայնքի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) (այսուհետև՝ Վճարող) օրենքի, դատական ակտի, վարչական ակտի, պայմանագրի կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքով ծագած գումարային պարտավորությունների (այսուհետև՝ Պարտավորություն) հաշվառումը իրականացվում է էլեկտրոնային մեկ միասնական համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով, որում յուրաքանչյուր պարտավորության հաշվառում իրականացվում է ըստ Վճարողի համար ինքնաշխատ ձևով ստեղծված անձնական քարտի: Վճարողի անձնական քարտում հաշվառված պարտավորությունները մարվում են Երևան համայնքի հանդեպ առկա Պարտավորությունների կատարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող Պարտավորությունների միասնական հաշվից (այսուհետև՝ Միասնական հաշիվ): Միասնական հաշվի գումարը ձևավորվում է միասնական հաշվին կատարված վճարումներից կամ դատական ակտի կամ վարչական բողոքի արդյունքում ընդունված որոշման հիման վրա կամ Երևան համայնքի կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում Պարտավորության վերացման կամ պակասեցման կամ որևէ մարված Պարտավորության մասով արտոնություն ձեռք բերելու արդյունքում միասնական հաշվին համայնքի կողմից վերադարձված գումարից: Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները մուտքագրվում են միասնական հաշվին՝ դրանց վճարման կամ վերադարձման օրվա ամսաթվով: Միասնական հաշվին կատարված վճարումները չեն համարվում համայնքի եկամուտներ և վճարներ, քանի դեռ դրանց հաշվին պարտավորություններ չեն մարվել:

Նախագծով սահմանվում է նաև այն պարտավորությունները, որոնք Միասնական հաշվում առկա գումարների հաշվին, անկախ դրանք Միասնական հաշվին մուտքագրելու ժամանակ նշված վճարման նպատակից, մարվում են առաջնահերթ:

Նախագծով ավագանու լիազորությունների ընդլայնման, դրանց վերանայման արդյունքում առաջարկվում է վերանայել նաև ավագանու անդամի գործունեության համար փոխհատուցման կարգը: Մասնավորապես, Նախագծով նախատեսվում է, որ Ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու սահմանած կարգով կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի եռապատիկի, մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը և խմբակցության քարտուղարը՝ քառապատիկի, իսկ մշտական հանձնաժողովի նախագահը և խմբակցության ղեկավարը՝ հինգապատիկի չափով:

Նախագծով նախատեսվում է ավագանու անդամի պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց դրամական փոխհատուցման տարբերակված կարգ՝ կախված ավագանու անդամի գործունեությունից և կարգավիճակից՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի և խմբակցության քարտուղարի համար փոխհատուցման չափը սահմանելով Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի քառապատիկի, մշտական հանձնաժողովի նախագահի և խմբակցության ղեկավարի համար՝ հինգապատիկի չափով, իսկ մնացած դեպքերում՝ եռապատիկի չափով:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումներին համապատասխան առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքում, «Համայնքային ծառայության մասին» օրենքում, «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում, և այլ օրենքներում:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ գլուխներով կարգավորված են հայցի ապահովման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված են հայցի ապահովման միջոցները:

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի

միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին: Նույն հոդվածի 129-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված են հայցի ապահովման միջոցները:

Դատավարագիտության մեջ հայցի ապահովումը դիտարկվում է որպես դատարանի կողմից կատարվող դատավարական գործողություն, որը հետապնդում է գործով կայացվելիք վճռի կատարման երաշխիքներ ապահովելու նպատակ: Միևնույն ժամանակ, հայցի ապահովումը դատական պաշտպանության դիմած անձանց իրավունքների պաշտպանության նախնական ձև է, քանի որ դատարանի որոշմամբ կիրառվող պաշտպանական միջոցները, որոնք դատավարագիտության մեջ կոչվում են հայցի ապահովման միջոցներ, հանդես են գալիս որպես վիճելի իրավահարաբերության կամ դրա հետ սերտորեն կապված այլ իրավահարաբերությունների մասնակիցների վրա նյութաիրավական ներգործության այնպիսի ժամանակավոր միջոցներ, որոնք չեզոքացնում են վիճելի իրավիճակը մինչև դրանում լիարժեք իրավական որոշակիության հաստատումը:

Կոնկրետ հայցի ապահովման համար կիրառվող ապահովման միջոցների տեսակը և բովանդակությունը որոշելիս դատարանը պետք է հիմք ընդունի համաչափության սկզբունքը, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածից, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն օրենքով սահմանված իրավաչափ նպատակին հասնելու համար:

Նշված հիմնարար ու ելակետային գաղափարը հաշվի առնելով՝ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածում նախատեսել է հայցի ապահովման միջոցի կիրառման համաչափության պահանջի մասնավոր դրսևորումներ, սահմանելով, որ կիրառվող հայցի ապահովման միջոցը չպետք է հանգեցնի իրավաբանական անձի գործունեության իրականացման փաստացի անհնարինության կամ նրա գործունեության համար ստեղծի էական խոչընդոտներ կամ հանգեցնի իրավաբանական անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման: «Գնումների մասին» օրենքով նախատեսված գնումների հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի կամ գնման պայմանագրի կատարման կասեցմանը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ հիմքում դնելով կողմերի իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու պահանջը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը միևնույն ժամանակ, արգելք է նախատեսել հայցի ապահովման այնպիսի միջոցների կիրառման համար, որոնց կիրառումը կարող է հանգեցնել վիճելի իրավահարաբերության մյուս կողմի իրավունքների անհամաչափ սահմանափակմանը:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցների օրինականացման կամ քանդման (ապամոնտաժման) հետ կապված վեճերով հայցի ապահովման այնպիսի միջոցի կիրառումը, որն ուղղված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցների քանդման (ապամոնտաժման) կասեցմանը, գործնականում հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ ինքնական շինարարություն իրականացրած անձը դրսևորելով անբարեխիղճ վարքագիծ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կառուցում կամ վերակառուցում կամ տեղադրում է շենք, շինություն կամ այլ կառույց, իսկ կիրառվող հայցի ապահովման միջոցը հանգեցնում է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ կառուցված շենքերի, շինությունների և այլ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելմանը: Արդյունքում, ստացվում է իրավիճակ, երբ գործնականում առկա է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ կառուցված շենք, շինություն (ինքնական կառույց), սակայն որի քանդումը (ապամոնտաժումը) հնարավոր չի լինում դատարանի կողմից հայցի ապահովման միջոցի կիրառմամբ, ինչի արդյունքում էլ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտի կայացումը (հաշվի առնելով ներկայումս դատարաններում առկա ծանրաբեռնվածությունը, գործի քննությունը կարող է տևել տարիներ) պետությունը, համայնքը զրկվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով երաշխավորված իրավունքից:

Արդյունքում, նշված ժամանակահատվածում պետությունը/ համայնքը զրկվում է իր սեփականությունը հանդիսացող հողամասում հանրային նշանակություն ունեցող այնպիսի քաղաքաշինական ծրագրեր և միջոցառումներ իրականացնելու հնարավորությունից, որի կատարումը գերակա է և բխում է հանրության իրավաչափ ակնկալիքներից և շահերից:

Նկատի ունենալով նշվածը և ելնելով պետության, համայնքի (որպես սեփականության սուբյեկտի) առանձնահատկություններից՝ Նախագծով առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում նախատեսել նոր կարգավորում՝ նախատեսելով, որ չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելմանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից,

բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, իր բազմաթիվ որոշումներում նշել է, որ այն բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն, ընդհանուր շահից ելնելով, վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*տե՛ս, օրինակ, Սպորրոնգը և Լոնրոդն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով
2. բխում է հանրային շահից
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*տե՛ս, Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*տե՛ս, Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջումների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: (*տե՛ս, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, կետ 32, Բեյելերն ընդդեմ Իտալիայի գործով*

Եվրոպական դատարանի 05.01.2000 թվականի վճիռը, կետ 98, Իսմայլովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 06.11.2008 թվականի վճիռը, կետ 28):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի պատկանող հողամասում գտնվող անշարժ գույքի սեփականատերն իրավունք ունի օգտագործել այդ հողամասի այն մասը, որում ամրակայված է անշարժ գույքը: Նույն օրենսգրքի 208-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի օգտագործման իրավունքը դադարելիս այդ հողամասի վրա հողօգտագործողի կառուցած շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է հողամասի սեփականատիրոջը, եթե այլ բան նախատեսված չէ հողամասի սեփականատիրոջ և հողօգտագործողի միջև պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 208-րդ հոդվածում ամրագրված կարգավորումից պարզ է դառնում, որ հողամասի օգտագործման իրավունքը դադարելիս այդ հողամասի վրա հողօգտագործողի կառուցած շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է հողամասի սեփականատիրոջը:

Այս առումով նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կարգավորումը՝ գործնականում առաջացող տարրնթերցումները և տարրնկալումները վերացնելու նպատակով Նախագծերի փաթեթով առաջարկվում է փոփոխություն կատարել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ և 208-րդ հոդվածներում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում: Չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝ (...) 8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի պահանջները՝ Նախագծով առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 208-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, արդյունքում նախատեսելով, որ՝ հողամասի օգտագործման իրավունքը դադարելիս այդ հողամասի վրա գտնվող շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը

դատարանի վճռի հիման վրա համարժեք փոխհատուցմամբ անցնում է հողամասի սեփականատիրոջը, եթե այլ բան նախատեսված չէ հողամասի սեփականատիրոջ և հողօգտագործողի միջև կնքված պայմանագրով: Նույն հողվածի իմաստով համարժեք փոխհատուցում է համարվում անշարժ գույքի շուկայական արժեքը: Հողամասի օգտագործման իրավունքը դադարելիս այդ հողամասի վրա գտնվող շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի նկատմամբ հողամասի սեփականատիրոջ իրավունքը այդ սեփականության նկատմամբ ծագում է վճռից ծագող իրավունքների պետական գրանցման պահից: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը և սահմանած փոխհատուցման գումարը վճարելու վերաբերյալ ապացույցը:

Մինչև 2006 թվականը գործող կարգավորումների շրջանակներում համայնքային և պետական սեփականությունը հանդիսացող հողամասերում թույլատրվել է կառուցել շինություններ, որոնց նկատմամբ գրանցվել է այդ հողամասերի վարձակալների սեփականության իրավունքը և ներկայումս նշված գույքի սեփականության իրավունքի դադարեցման հիմքեր առկա չեն, բացի այդ՝ շատ դեպքերում հողամասերի վարձակալության ժամկետներն արդեն իսկ դադարել են, սակայն վարձակալության իրավունքի դադարեցման պետական գրանցում չի կատարվում, քանի որ շինությունը չի կարող մնալ առանց հողամասի նկատմամբ իրավունքի առկայության:

Համայնքի տարածքում առկա են բազմաթիվ նման գույքեր՝ մեծամասամբ այգիներում և մայթերի վրա, որոնց վարձակալության ժամկետները լրացած են, սակայն փոքր շինության առկայության հիմքով մեծ մակերեսով հողամասեր շարունակվում են մնալ այդ շինությունների սեփականատերերի տիրապետման ներքո:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք օրենքով ամրագրել 2 կարգավորում՝

1) վարձակալության ժամկետի լրանալու դեպքում հողամասի վարձակալության իրավունքի մասնակի դադարեցում, պահպանելով միայն շինությամբ զբաղեցրած հողամասի իրավունքի գրանցումը,

2) հստակեցնել նման շինությունը դատական ակտի հիման վրա համայնքին շուկայական արժեքով օտարելու ընթացակարգը:

3. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 236-րդ և 251-րդ հոդվածներով սահմանված են այն դեպքերը, երբ անշարժ գույքի և փոխադրամիջոցների գործարքների ժամանակ պահանջվում է ներկայացնել հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք: Օրենսգրքում նշված դեպքերը ամբողջական չեն, որից ելնելով մի շարք դեպքերում չի պահանջվում ներկայացնել հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքը, բացի այդ 2022թ.-ի ապրիլ ամսից նշված տեղեկանքները տրամադրվում են առցանց, որի վերաբերյալ նշումը նույնպես բացակայում է Օրենսգրքում, որից ելնելով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 236-րդ և 251-րդ հոդվածներով սահմանված՝ անշարժ գույքի և փոխադրամիջոցների գծով հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքերը առաջարկվում է դարձնել առավել ընդգրկուն՝ ներառելով անշարժ գույքի և փոխադրամիջոցի հետ

կապված բոլոր գործարքները, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2022թ. ապրիլ ամսից հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են առցանց տարբերակով և լրացուցիչ դժվարություններ չեն ստեղծվելու քաղաքացիների և կազմակերպությունների համար:

4. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխվող օրենքների նախագծերին համապատասխան վարչական պատասխանատվություն սահմանել Նախագծերով նախատեսված պահանջները, պայմանները, սահմանափակումները խախտելու համար

Միևնույն ժամանակ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է վերանայել վարչական իրավախախտման արձանագրության կազմման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 255-րդ հոդվածը սահմանելով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ նախատեսում է, որ «(...) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, տեղեկություններ խախտողի անձի մասին, վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար, վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան, խախտողի բացառությունը, գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը, վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք: Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացառություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները: Խախտողին բացառվում է Օրենսգրքի 267 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշում է արվում (...)»:

Վերոգրյալ կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջը հետևյալն է՝ **վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմել իրավախախտում կատարած անձի ներկայությամբ՝ վերջինիս պարտադիր պարզաբանելով Օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները:**

Հաշվի առնելով հիշյալ կարգավորման առնչությամբ գործնականում առաջացող հիմնախնդիրները և վարչական մարմինների կողմից կայացվող ակտերի վիճարկման

հանգամանքը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման պահանջներին համապարփակ կերպով անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը իր ՎԴ/0150/05/16 որոշմամբ անդրադառնալով Օրենսգրքի 255-րդ հոդվածում ամրագրված կարգավորմանը՝ արձանագրել է հետևյալը՝ «(...) վերոգրյալ իրավադրույթներից բխում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) **վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ:** (...) Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտարկություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր կարծիքով հիմք են հանդիսացել արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու համար: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ:»:

Այսպիսով, ինչպես նշված իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու է **իրավախախտին ենթարկել վարչական պատասխանատվության միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վերոգրյալ ընդհանուր կանոնների, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջների պահպանման պայմաններում:** Վերոգրյալի համատեքստում, սակայն, հարկ է նկատել, որ գործնականում, հաճախ, վարչական իրավախախտման հատկանիշների հայտնաբերման պահին՝ իրավախախտման սուբյեկտի արձանագրության կազմման վայրում չգտնվելը հանգեցնում է մի շարք խնդիրների, մասնավորապես՝ մի կողմից վարչական իրավախախտում կատարած անձի բացակայության (արձանագրության կազմման պահին վարչական իրավախախտման հայտնաբերման վայրում չգտնվելու) պայմաններում Օրենսգրքի 255-րդ հոդվածում ամրագրված իմպերատիվ պահանջների համատեքստում շատ հաճախ հնարավոր չի լինում արձանագրել հայտնաբերված վարչական իրավախախտումները, մյուս կողմից էլ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս Օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված պահանջներից որևէ մեկը չպահպանելը հանգեցնում է

կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության և դրա հիման վրա ընդունվող վարչական ակտի վիճարկմանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է աշխատանքային գործընթացի խափանմանը և խոչընդոտ հանդիսանում Օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների կանխարգելման և ըստ այդմ նաև՝ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու գործընթացի համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել Օրենսգրքում կատարել փոփոխություններ: Մասնավորապես, որպես նշված հիմնախնդիրների լուծում, Նախագծով առաջարկվում է նախատեսել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս վարչական իրավախախտում կատարած անձի ներկայությունը պարտադիր չէ:

Միաժամանակ, Նախագծով առաջարկվում է նախատեսել նաև, որ Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը, վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, այն նորմատիվ իրավական ակտը (վերջինիս այն հոդվածը, մասը, կետը, ենթակետը կամ պարբերությունը), որը վարչական պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար, վկաների և տուժողների անունները, ազգանունները և հասցեները (եթե այդպիսիք առկա են և արձանագրության կազմման պահին այդ տվյալները հայտնի են), տեղեկություններ խախտողի անձի մասին, գործի լուծման համար նշանակություն ունեցող անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Օրենսգրքի 267-րդ հոդվածը նախատեսում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ, գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին, իսկ 278-րդ հոդվածը սահմանելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու կարգը՝ նախատեսում է, որ գործի քննությունն սկսվում է տվյալ գործը քննող կոլեգիալ մարմնի կազմը հայտարարելով կամ պաշտոնատար անձին ներկայացնելով: Գործը քննող կոլեգիալ մարմնի նիստին նախագահողը կամ պաշտոնատար անձը հայտարարում է, թե ինչ գործ է քննվելու, ով է կանչված վարչական պատասխանատվության, գործի քննությանը մասնակցող անձանց բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, հրապարակում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը: Նիստում լսում են գործի քննությանը մասնակցող անձանց, հետազոտվում են ապացույցները և լուծվում միջնորդությունները: Գործի քննությանը դատախազի մասնակցության դեպքում լսվում է նրա եզրակացությունը:

Վերոգրյալ կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսգիրքը նախատեսում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության միայն բանավոր ընթացակարգ, իսկ գործերի քննության գրավոր ընթացակարգ Օրենսգրքով նախատեսված չէ, մինչդեռ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելը կնպաստի վարչական

մարմինների կողմից քննվող գործերի արդյունավետությանը, խնայողությանը, ինչպես նաև դյուրինացմանը:

Հատկանշական է, որ միջազգային փորձի ուսումնասիրությունից ևս բխում է վարույթների ընթացքում գործերի քննության գրավոր ընթացակարգ ներդնելու արդի միտումները¹: Հիշյալ հաշվառմամբ ՀՀ ներպետական իրավական համակարգում մի շարք օրենսդրական փոփոխությունների արդյունքում ևս ներդրվել է գործերի քննության գրավոր ընթացակարգ: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածը նախատեսում է, որ դատարանում գործերի քննությունն իրականացվում է բանավոր: **Նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում գործի քննությունը կարող է իրականացվել կամ իրականացվում է գրավոր ընթացակարգով:**

Վարչական գործերի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ կարգավորումներ նախատեսում է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 64-րդ հոդվածը:

Տվյալ պարագայում վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Օրենսգրքով նախատեսված կարգավորումներին և նպատակ ունենալով նպաստել վարչական վարույթների արդյունավետ իրականացմանը՝ Նախագծով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում ներդնել գրավոր ընթացակարգ՝ նախատեսելով, որ (...) նույն օրենսգրքով տեղական ինքնակառավարման մարմիններին և ոստիկանությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը վարչական մարմնի կողմից իրականացվում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական մարմինը գալիս է եզրահանգման, որ գործն անհրաժեշտ է քննել բանավոր ընթացակարգով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվում է նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն հոդվածով: Վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովվում է վարույթի հարուցման մասին ծանուցվելուց հետո նրա կողմից վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր ներկայացնելու միջոցով: Վարչական մարմինը վարչական վարույթի մասնակիցներին վարչական գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ ծանուցում է վարչական վարույթի վերաբերյալ նյութերը

¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, անդրադառնալով կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին, նշել է, որ անդամ պետությունները կարող են կիրառել պարզեցված ընթացակարգեր «փոքր» և ոչ բարդ գործերի համար: Նման մոտեցումը կարող է նպաստել դատարանի մարչեփոխության իրավունքի երաշխավորմանը, դատական խնայողության ապահովմանը և վեճերի լուծման դյուրինացմանը (*Pönka vs Estonia, No. 64160/11, p 30; on the obligation to hold a hearing see also: Göç v. Turkey [Grand Chamber], No. 36590/97, p 47*),

Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության հարցերի եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից նշվել է, որ վարչական դատավարության արդյունավետությունը բարձրացնելու հիմնական միջոցներից է վարչական գործերով պարզեցված վարույթի նախատեսումը (*The European Commission for the Efficiency of Justice (CEPEJ). 2014. European judicial systems – Edition 2014 (2012 data): efficiency and quality of justice. Strasbourg, France:*):

(արձանագրություն և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) անձին ներկայացնելու հետ մեկտեղ: Հիշյալ ծանուցման հետ մեկտեղ վարչական մարմինը վարչական վարույթի մասնակիցներին ներկայացնում է նաև գրավոր պարզաբանում՝ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքների և պարտականությունների մասին, վարչական վարույթի համար անհրաժեշտ նյութերը ներկայացնելու, դրանց ներկայացման ժամկետների և սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքների մասին: Վարչական վարույթի մասնակցի միջնորդությունները, բացատրությունները, ապացույցները և այլ անհրաժեշտ նյութերը կարող են ներկայացվել վարչական գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ ծանուցվելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում: Բանավոր լսումներ անցկացնելու անհրաժեշտության դեպքում վարչական մարմինը վարույթի մասնակիցներին և, ըստ անհրաժեշտության, այլ անձանց ծանուցում է նիստի անցկացման ժամանակի և վայրի մասին: Վարչական գործի քննությունը բանավոր ընթացակարգով իրականացնելու դեպքում վարույթի նկատմամբ կիրառվում են նույն օրենսգրքով նախատեսված վարչական գործի քննության կարգին վերաբերող ընդհանուր կարգավորումները:

Նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 124.7-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման պարտադիր նախապայմանի սահմանում, որը կխթանի անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանմանը, նյութական ռեսուրսների խնայողությանը, ողջամիտ ժամկետում անձի իրավունքների պաշտպանության հնարավորությանը, կնպաստի դատարանների անհարկի ծանրաբեռնվածության թեթևացմանը, դատարանների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Առաջարկվող կարգավորման պարագայում դատարանում կվիճարկվեն բացառապես վերադատության կարգով չվերացված վարչական ակտերը, ինչն էլ կհանգեցնի վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը և անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությանը: Բացի այդ, Նախագծով առաջարկվող կարգավորմամբ մինչև դատական իշխանության միջամտությունը հնարավորություն կտրվի վարչական մարմնին վերացնելու վիճարկվող վարչական ակտերը:

Հարկ է նկատել, որ վարչական բողոքարկման միջոցների սպառման պահանջը ամերիկյան վարչական իրավունքի դոկտրինալ սկզբունքներից է, որը սկիզբ է առել դեռևս 19- րդ դարում, երբ դատարանները պահանջել են սպառել վարչական միջոցները մինչև դատարան դիմելը: Մինչ օրս սա դատավարության հիմնական կանոններից է: Իհարկե, ամերիկյան մասնագետները քննարկում են դրա նպատակահարմարությունը բացառիկ դեպքերում, սակայն նրանց շրջանում չկա վեճ այն հարցի շուրջ՝ արդյո՞ք վարչական բողոքարկման միջոցների սպառումը ինքնին դատական պաշտպանության համաշափ սահմանափակում է, թե՛ ոչ: Նման սահմանափակումը ոչ միայն համարվում է իրավաչափ, այլև անհրաժեշտ պայման իշխանությունների բաժանման և հակակշռման համակարգի ապահովման համար: Ամերիկյան վարչական իրավունքի դոկտրինալ աղբյուրներում առաջնային է այն գաղափարը, որ գործադիր իշխանությունը պետք է հնարավորություն ունենա շտկելու իր սխալները մինչև դատական իշխանության

միջամտությունը: Սա կարևոր գործոն է գործադիր իշխանության ինքնուրույնությունը երաշխավորելու համար²:

Եվրոպական երկրներում ևս վարչական բողոքարկման միջոցների սպառման դոկտրինը լայնորեն տարածված է և միջոցների սպառման պահանջը համարվում է հիմնական³: Մասնավորապես, այդպիսի երկրների ցանկում են ներառված Իսպանիան⁴, Բելգիան, Չեխիան, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Ավստրիան, Սլովենիան, Սլովակիան, Ֆինլանդիան, Գերմանիան⁵, Շվեդիան, Մեծ Բրիտանիան, Հունգարիան⁶ :

Նախագծով առաջարկվում է փոփոխություն կատարել նաև Օրենսգրքի 37-րդ հոդվածում: Մասնավորապես՝ Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի: Գործնականում Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված՝ **վարչական իրավախախտման կատարման օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում վարչական տույժ նշանակելու ժամկետները** չեն ծառայում վարչական իրավախախտումների հայտնաբերման, արձանագրման, անձի ծանուցման, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և արդյունավետ իրականացմանը, ուստի նախագծով առաջարկվում է փոփոխել սահմանված ժամկետները՝ նախատեսելով առավել ողջամիտ և գործուն կառուցակարգեր:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը իր ՎԴ/3864/05/20 գործով անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածին արձանագրել է՝ «... վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի (...):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարույթային և վաղեմության ժամկետներն իրավական նշանակությամբ տարբերվում են: Օրինակ, վարույթային ժամկետներ են սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ

² MICHAEL J. WHELLAN, EXHAUSTION OF ADMINISTRATIVE REMEDIES, Graves Dougherty Heaton & Moody, 2010 - https://www.abaustin.com/files/exhaustion_of_administrative_remedies.pdf, RAOUL BERGER, EXHAUSTION OF ADMINISTRATIVE REMEDIES, 48 Yale L.J. (1939) - <http://digitalcommons.law.yale.edu/yj/vol48/iss6/2>

³ Տե՛ս Jean-Marie Woehrling: Judicial Control of Administrative Authorities in Europe, HRVATSKA JAVNA UPRAVA, god. 6. (2006.), br. 3, էջ 42 - <https://hrcak.srce.hr/file/200440>

⁴ https://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/spain/spain_en.pdf

⁵ Տե՛ս Wolters Kluwer., Verwaltungsrechtsschutz in Deutschland, Հասանելի է հետևյալ հղումով. (https://books.google.am/books?id=wye0g7FF9M8C&printsec=frontcover&hl=hy&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false.):

⁶ https://e-justice.europa.eu/content_access_to_justice_in_environmental_matters-300-huen.do?member=1:

հողվածում (վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու ընդհանուր և հատուկ ժամկետներ): Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները վաղեմության ժամկետներ են: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի կասեցման ուժով կասեցվում է միայն վարույթային ժամկետի ընթացքը: Մինչդեռ, վաղեմության ժամկետի ընթացքի վրա վարչական վարույթի կասեցումը չի ազդում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը չի նախատեսում վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման որևէ դեպք (հիմք), որպիսի պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետների ընթացքն ընդհանրապես կասեցման ենթակա չէ: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի կասեցման ժամանակահատվածում վաղեմության ժամկետի ընթացքը չի կասեցվում:

Անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այդ նորմով օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար: Փաստորեն, վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը: Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը վաղեմության ժամկետի լրանալը դիտում է որպես վարչական գործով վարույթը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները (տե՛ս, Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը): Վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետ սահմանելով՝ օրենսդիրն ունեցել է այդ ժամկետից դուրս անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը բացառելու նպատակ՝ հիմք ընդունելով այդ ժամկետի ավարտից հետո կատարված արարքի հանրային վնասակարության կորուստը և վարչական տույժ նշանակելու աննպատակահարմարությունը: Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով պարզ և հստակ սահմանվել են անձին վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները, որոնց լրանալը բացառում է վարչական գործով վարույթը: Ուստի այն դեպքում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում որպես բացառություն նախատեսված չէ այնպիսի հիմք, որի

առկայության պայմաններում բաց է թողնվում նույն հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը, ապա տվյալ դեպքում այդ ժամկետի բաց թողնելու փաստը հիմք է վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չհարուցելու, իսկ հարուցված վարչական գործի վարույթը կարճելու համար՝ վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական վարույթի կասեցված լինելու հիմքը՝ որպես բացառություն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում նախատեսված չէ, հետևաբար վարչական ակտի կատարումը կասեցված լինելու հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետն անցնելու դեպքում, վարչական մարմինն այլևս զրկվում է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունից՝ հաշվի առնելով վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի լրացած լինելու, այսինքն՝ վարչական իրավախախտման գործով վարույթը բացառող հանգամանքի առկայությունը:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ՀՀ վճռաբեկ դատարանի արձանագրմամբ վարչական վարույթի ժամկետը և վարչական տույժի նշանակման վաղեմության ժամկետները իրավական նշանակությամբ տարբերվում են և կասեցման ուժով կասեցվում է միայն վարույթային ժամկետի ընթացքը, մինչդեռ, վաղեմության ժամկետի ընթացքի վրա վարչական վարույթի կասեցումը չի ազդում՝ վարչական իրավախախտում կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու և սահմանված ժամկետում վարչական տույժի նշանակումը ապահովելու նպատակով՝ Նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածում: Նախագծով նախատեսված կարգավորման նպատակն է հասնել հանրային և մասնավոր շահերի զուգակցված իրավական պաշտպանությանը՝ վարչական մարմնին հնարավորություն տալով գործի քննությունն իրականացնել առավել ողջամիտ ժամկետում՝ իրականացնելով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 224-րդ հոդվածում նախատեսված են այն վարչական իրավախախտումները, որոնց վերաբերյալ գործերի քննությունը վերապահված է ՀՀ Ոստիկանությանը:

Նույն օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) (..):

Վերոգրյալ կարգավորումների բովանդակությունից պարզ է դառնում, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) համապատասխան հոդվածներով սահմանված են այս կամ այն իրավախախտում կատարելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները, որոնց վերապահված է նաև վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմելու իրավասությունը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածում ամրագրված կարգավորումներից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության Ոստիկանությանը վերապահված է նաև նույն օրենսգրքի 124-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոնք վերաբերվում են տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված կարգավորման համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Այս առումով հարկ է նկատել, որ մեխանիկական տրանսպորտային միջոցներով կատարված, տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանված են «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով: Ընդ որում, օրենքում ամրագրված կարգավորումներից պարզ է դառնում, որ օրենքով նախատեսված դեպքերում որոշումը կայացնելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում ամրագրված կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական վարույթը բաղկացած է ***իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից***: Վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

Վարչական իրավախախտման հայտնաբերումը և վարչական իրավախախտման համար տուգանքի նշանակումը բխում է ոչ թե միայն մեկ մարմնի շահերից, այլ՝ հասարակության և պետության ընդհանուր շահերից, քանի որ այն նպատակ է հետապնդում կանխարգելել իրավախախտում հանդիսացող արարքի կատարումը՝ այդպիսով զերծ պահելով բնակչությանը կամ իրավաբանական անձանց սահմանված հանրային վտանգավորություն ներկայացնող արարքների կատարումից:

Տվյալ պարագայում վերը նշված ընդհանուր նպատակին հասնելու համար առաջարկվում է նախատեսել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ սահմանված վարչական իրավախախտումների դեպքերով վարչական վարույթ կարող է իրականացվել նաև համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձանց կողմից՝ վարչական մարմնին

ներկայացված հնարավոր վարչական իրավախախտման դեպքի մասին նյութերի հիման վրա: Սույն մասում նշված նյութերը վարչական մարմնի կողմից կարող են օգտագործվել որպես վարչական իրավախախտման դեպքը հիմնավորող ապացույց: Համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձանց կողմից ներկայացված նյութերը կարող են դրվել վարչական վարույթի հիմքում, եթե դրանք հնարավորություն են տալիս պարզելու վարչական իրավախախտման հատկանիշները, իրավախախտման գործիք հանդիսացող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, իրավախախտումը կատարելու վայրն ու ժամանակը:

Գործը քննելու իրավասությամբ օժտված անձինք պարտավոր են վարչական վարույթի արդյունքների մասին գրավոր տեղեկացնել իրավախախտման մասին նյութեր ներկայացրած անձանց՝ վարչական ակտ ընդունելու համար նախատեսված ժամկետները լրանալուց հետո՝ Նախագծերով սահմանված ժամկետում:

Տվյալ առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրինակ՝ Երևան համայնքը ունի բավականաչափ միջոցներ և ռեսուրսներ հայտնաբերելու նաև այլ մարմինների իրավասությանը վերապահված իրավախախտումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի շատ վայրերում տեղադրված են տեսախցիկներ, որոնք բացի օրենքով սահմանված տեղական վճարը չվճարելու դեպքում համայնքային վճարովի ավտոկայանատեղում կայանելու իրավախախտումներից ֆիքսում են նաև այլ իրավախախտումներ, օրինակ՝ ոչ սահմանված վայրում մեքենա կայանելու, հաշմանդամների համար նախատեսված վայրերում մեքենա կայանելու, ճանապարհային նշանների կանոնների խախտումների և այլ իրավախախտումների կատարման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ գործնականում բարձրացված խնդիրները վերաբերելի են նաև մյուս վարչական իրավախախտումների դեպքերին՝ Նախագծերի փաթեթով առաջարկվում է համապատասխան լրացումներ կատարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում», «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում»:

5. Նախագծերի փաթեթով առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առաձնահատկությունների մասին» օրենքում՝ վերանայելով տեղական տուրքերը և վճարները յուրաքանչյուր տարի հաստատելու վերաբերյալ կարգավորումները: Խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերը և վճարները կարող են հաջորդ տարվա ընթացքում չփոփոխվել, այսինքն օբյեկտիվորեն կարող է անհրաժեշտություն չառաջանալ հաջորդ ընթացիկ տարվա համար սահմանելու նոր տեղական տուրքեր և վճարներ, փոփոխել դրանց դրույքաչափերը, այսինչ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում, ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի

տեղական վճարի և վարչական վարույթի առաձնահատկությունների մասին» օրենքում ամրագրված պահանջների կատարումից ելնելով տեղական ինքնակառավարման մարմինները ստիպված ծախսելով լրացուցիչ ռեսուրսներ՝ առանց փոփոխության անհրաժեշտության պետք է յուրաքանչյուր տարի հաստատեն համայնքում գործող տեղական տուրքերը, վճարները և դրանց դրույքաչափերը, ինչը արդյունավետ չի կարող համարվել: Ըստ այդմ, Նախագծերի փաթեթով առաջարկվում է վերանայել նաև օրացուցային տարվա համար համայնքի ավագանու սահմանած տեղական վճարների և տեղական տուրքերի դրույքաչափերը փոփոխության ենթարկելու արգելքի վերաբերյալ կարգավորումները: Խնդիրը կայանում է նաև նրանում, «Տեղական տուրքերի և վճարներների վերաբերյալ» օրենքով և համայնքի ավագանու որոշումներով տեղական տուրքերը և վճարները սահմանվում են՝ օրացուցային տարվա համար, եռամսյակային, օրական և այլն: Օրենքում ամրագրված կարգավորումները արգելք են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների համար տարվա ընթացքում փոփոխելու սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, ինչը օբյեկտիվորեն հիմնավորված չէ, քանի որ ընթացիկ տարվա ընթացքում տարաբնույթ օբյեկտիվ իրողություններով պայմանավորված կարող է անհրաժեշտություն առաջանալ վերանայելու օրենքով սահմանված գործողությունների համար կամ համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար վճարման ենթակա տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղական տուրքերի և վճարների հասկացությունները, տեղական տուրքեր և վճարներ վճարողների իրավունքները և պարտականությունները, տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը կամ փոխհատուցման վճարները, գանձման, արտոնությունների կիրառման, ավել վճարված գումարների վերադարձման կարգն ու պայմանները:*

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջեային համակարգի մասին», «Առևտրի և ծառայությունների մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով:*

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողներն իրավունք ունեն՝ (...)

2) պահանջելու տեղական տուրք և (կամ) վճար գանձող պաշտոնատար անձանցից՝ կատարել տուրքի և (կամ) վճարի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերահաշվարկ. (...)

5) դիմելու համայնքի ղեկավարին՝ սույն օրենքով սահմանված կարգով վերադարձման ենթակա տեղական տուրքի և (կամ) վճարի գումարը ստանալու համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի և (կամ) ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Տեղական տուրքը և (կամ) վճարը ենթակա է վերադարձման, եթե՝

1) տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան համայնքի ավագանու սահմանած դրույքաչափը.

2) տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան հաշվարկվել է տուրք կամ վճար հաշվարկող պաշտոնատար անձի կողմից.

3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մերժվել է սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացումը):

3. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողի գումարի վերադարձի վերաբերյալ դիմումը կարող է մերժվել գումարի չափի հիմնավորման անհրաժեշտ և բավարար հիմքերի բացակայության դեպքում:»:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 1-ին, 2-րդ և 17-րդ հոդվածներում ամրագրված կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ նույն օրենքով կարգավորվում են միայն ավել վճարված գումարների վերադարձման կարգն ու պայմանները, ընդ որում, ինչպես օրենքի 17-րդ հոդվածից պարզ է դառնում՝ տեղական տուրքը և (կամ) վճարը ենթակա է վերադարձման, եթե՝ տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան համայնքի ավագանու սահմանած դրույքաչափը, տեղական տուրքը և (կամ) վճարը վճարվել է ավելի, քան հաշվարկվել է տուրք կամ վճար հաշվարկող պաշտոնատար անձի կողմից, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մերժվել է նույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացումը):

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 2-րդ հոդվածից պարզ է դառնում, որ տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև առանձին օրենքներով, մասնավորապես տվյալ պարագայում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ավտոկայանատեղերի համար տեղական վճարի (այսուհետ՝ վճար) վճարման հետ

կապված հարաբերությունները, սահմանվում են վճար վճարողները, վճար վճարողների իրավունքներն ու պարտականությունները, վճարի դրույքաչափերը, վճարի սահմանման, գանձման կարգը և պայմանները, վճար չվճարելու համար պարտասխանաբարությունը, վարչական վարույթի առանձնահատկությունները:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *ավտոկայանատեղի վճար վճարողներն իրավունք ունեն*' (...)

2) *պահանջելու ավտոկայանատեղի վճար գանձող մարմնից կատարելու վճարի վերահաշվարկ. (...)*

5) **օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջելու և ստանալու վերադարձման ենթակա ավտոկայանատեղի վճարի գումարը:**

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *ավտոկայանատեղի վճարի ավել մուծված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը հանձնելուն հաջորդող տասնհինգ օրվա ընթացքում:*

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում ամրագրված կարգավորումներից պարզ է դառնում, որ *ավտոկայանատեղի վճար վճարողներն իրավունք ունեն օրենքով սահմանված դեպքերում հետ պահանջելու և ստանալու վերադարձման ենթակա ավտոկայանատեղի վճարի գումարը, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողներն իրավունք ունեն*' (...) ***դիմելու համայնքի ղեկավարին՝ նույն օրենքով սահմանված կարգով վերադարձման ենթակա տեղական տուրքի և (կամ) վճարի գումարը (ավել վճարված գումարը) ստանալու համար:***

Ինչպես վերոգրյալից նկատելի է՝ ոչ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում, և ոչ էլ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում նախատեսված չեն «սխալ» վճարված գումարները վերադարձնելու վերաբերյալ կարգավորումներ:

Տվյալ պարագայում խոսքը, մասնավորապես, այն դեպքերի մասին է, երբ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքով նախատեսված տեղական վճարը վճարվել է՝ *ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի հաշվառման համարանիշի նշմամբ, որը տեղական վճարը վճարելու պահից մինչև գումարի վերադարձման վերաբերյալ դիմումի ներկայացման պահը հարկացված չի եղել (ներառված է եղել ազատ համարանիշների ցանկում) կամ համապարտասխան վավերապայմաններով նշված հաշվառման համարանիշ առկա չէ:*

Նշված խնդիրները կարգավորելու համար, անհրաժեշտություն է առաջացել կատարելու օրենսդրական փոփոխություններ:

Մասնավորապես, տվյալ պարագայում առաջարկվում է՝

1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ արդյունքում նախատեսելով, որ նույն օրենքով կարգավորվում են **վճարված գումարների վերադարձման կարգն ու պայմանները**: Սույն փոփոխությանը համապատասխան նախատեսվում է փոփոխություն կատարել նաև օրենքի 17-րդ հոդվածի վերնագրում և դրույթներում: Նախագծով առաջարկվում է նախատեսել, որ տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձին օրենքներով կարող են սահմանվել նաև տեղական տուրքի և (կամ) տեղական վճարի վճարված գումարները վերադարձնելու այլ հիմքեր: Տեղական տուրքերի և վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձին օրենքներով տեղական տուրքերի և վճարների վճարված գումարի վերադարձման այլ հիմքեր նախատեսված լինելու դեպքում գումարի վերադարձի վերաբերյալ դիմումը կարող է մերժվել նաև տվյալ օրենքներով նախատեսված դեպքերում:

2. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 18-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ նախատեսելով, որ *ավտոկայանատեղի վճարի ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը հանձնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում: Ավտոկայանատեղի վճարի վճարված գումարները ենթակա են վերադարձման նաև այն դեպքերում, երբ նույն օրենքով նախատեսված տեղական վճարը վճարվել է ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի հաշվառման համարանիշի նշմամբ, որը տեղական վճարը վճարելու պահից մինչև գումարը վերադարձնելու վերաբերյալ դիմումի ներկայացման պահը հարկացված չի եղել (ներառված է եղել ազատ համարանիշերի ցանկում) կամ համապատասխան վավերապայմաններով նշված հաշվառման համարանիշ առկա չէ: Նույն մասում նախատեսված դեպքերում տեղական վճարի վճարված գումարները ենթակա են վերադարձման ավտոկայանատեղի վճար վճարողի դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելուն հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:*

Նախագծով առաջարկվում է հստակեցնել նաև, որ ավտոկայանատեղի վճարի վճարումից հետո ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի փոփոխման դեպքում վճարված տեղական վճարի գումարը ենթակա չէ վերադարձման և (կամ) հաշվանցման (այլ ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի համար կիրառման):»

Այս առումով հարկ է նշել, որ ոչ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում, և ոչ էլ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում նախատեսված չեն ավտոկայանատեղի վճարի վճարումից հետո ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի փոփոխման դեպքում վճարված տեղական վճարի գումարը վերադարձնելու և (կամ) հաշվանցելու վերաբերյալ կարգավորումներ, կառուցակարգեր: Հիշյալ օրենքներով որպես վճար վճարողների իրավունք նախատեսված է հետևյալը՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողներն իրավունք ունեն ***պահանջելու տեղական տուրք և (կամ) վճար գանձող պաշտոնատար անձանցից՝ կապարել տուրքի և (կամ)***

վճարի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերահաշվարկ, ինչը սակայն հիշյալ դեպքերի համար կիրառելի չէ, ավելին՝ այն նախատեսում է վերահաշվարկման մեխանիզմ, սակայն վերջինիս բովանդակությունը օրենքով բացահայտված չէ: Ուստի, գործնականում առաջացող տարըմբռնումներից խուսափելու նպատակով Նախագծով նախատեսվում է սահմանել, որ ավտոկայանատեղի վճարի վճարումից հետո ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի փոփոխման դեպքում վճարված տեղական վճարի գումարը ենթակա չէ վերադարձման և (կամ) հաշվանցման (այլ ավտոտրանսպորտային միջոցի կամ հաշվառման համարանիշի համար կիրառման):»:

6. Նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացում կատարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ) վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը, առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման նպատակի խախտմամբ իրականացվող գործունեության վայրի շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցված լինելու դեպքում՝ գործունեության դադարեցման ժամանակահատվածում նույն գործունեությունն իրականացնելու համար, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Նախագծով առաջարկվող կարգավորումների համար հիմք են հանդիսացել գործնականում առկա այն բազմաթիվ դեպքերը, երբ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ) վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը իրականացվում է առանց սահմանված պահանջների պահպանման, իսկ մի շարք դեպքերում համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը և դրանցում գործունեությունը իրականացվում է առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման նպատակի խախտմամբ, որոնց նկատմամբ, սակայն, միայն վարչական պատասխանատվության նախատեսումը՝ տուգանքների նշանակումը չի ծառայում իր նպատակին, քանի որ տուգանքի գումարը վճարելով միևնույն է դրանք շարունակվում են իրականացվել:

Բարձրացված խնդրի մասին են վկայում նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից ներկայացված բազմաթիվ գրությունները՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահագրգիռ անձանց ձեռնարկելու

համապատասխան միջոցներ՝ բարձրացված խնդիրը օրենսդրական փոփոխությունների միջոցով կարգավորելու համար: Մասնավորապես,

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» գործող օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) քաղաքապետը իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

(...)

3) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված դեպքերում վարչական պատասխանատվության է ենթարկում զանցառուներին (...):»:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Առևտրի և սպասարկման բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

(...)

3) Երևան քաղաքի տարածքում տալիս է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվություն (...):»:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 15.2 հոդվածի համաձայն՝ «(...) սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ (բացառությամբ բուժական մերսման սրահների).

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 188-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Երևան համայնքի վարչական տարածքում կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա»:

Այս կապակցությամբ, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրության, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի և Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 188-Ն որոշման համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմնին օժտել է միայն առանց Երևանի քաղաքապետի թույլտվության գործունեություն իրականացնող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ (բացառությամբ բուժական մերսման

սրահների)) տուգանելու լիազորությամբ, իսկ դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու լիազորություն գործող օրենսդրության պահանջների համաձայն որևէ մարմնի վերապահված չէ:

Հաշվի առնելով արարքի հանրային վտանգավորությունը և դրա կանխարգելման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից գրություններ են ներկայացվել նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ (այսուհետ՝ աշխատակազմ), իսկ աշխատակազմի կողմից տեղական ինքնակառավարմար մարմիններին՝ առաջարկելով քննարկել բարձրացված հարցը և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Նկատի ունենալով նշվածը՝ Նախագծերի փաթեթով նախատեսվում է կարգավորել առկա օրենսդրական բացը՝ նախատեսել իրավասություն ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնելու Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ) վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը, առանց տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ կամ շենքի կամ շինության օգտագործման նպատակի խախտմամբ իրականացվող գործունեության վայրի շենքերի, շինությունների և այլ օբյեկտների շահագործումը. ընդ որում՝

ա) դադարեցումը առաջին անգամ կարող է իրականացվել 5 օր ժամկետով, երկրորդ անգամ՝ 10 օր ժամկետով, երրորդ և հաջորդ բոլոր դեպքերում 1 ամիս ժամկետով,

բ) սույն մասով սահմանված լիազորությունների իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ համապատասխան վարչական ակտը ընդունվում է Երևանի քաղաքապետի կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ առանց լսումներ իրականացնելու, որով կարող է նախատեսվել համապատասխան ագրեգատը, շենքը, շինությունը կամ այլ օբյեկտը կարող են կապարակնքվել (կնքվել):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցված գործունեությունն իրականացնելու համար միայն վարչական պատասխանատվության նախատեսումը չի ծառայելու իր նպատակին և հանգեցնելու է նրան, որ սուբյեկտները տուգանքը վճարելով շարունակելու են օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացնել գործունեությունը, ինչը վտանգ է ստեղծելու հասարակական կարգի պահպանության համար՝ Նախագծով նախատեսվում է հիշյալ արարքների կատարման համար նախատեսել նաև քրեական պատասխանատվություն:

Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունների հաշվառմամբ նախատեսվում է փոփոխություններ կատարել նաև հարակից այլ օրենքներում:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք. Նախագծերի փաթեթը մշակվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից:

Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծերի փաթեթի ընդունման նպատակն է վերանայել գործող օրենսդրական ակտերը՝ մշակելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և վերջիններիս վերապահված լիազորությունների իրականացման համար առավել արդյունավետ գործիքակազմեր, ինչպես նաև նորմատիվ իրավական կարգավորմամբ լուծել գործնականում տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառայած օրենսդրական կարգավորում չունեցող հարցերն ու խնդիրները:

Օրենքների ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում անհրաժեշտություն է առաջանալու ընդունելու նոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, ինչպես նաև գործող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեցնելու Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումներին:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի փաթեթով նախատեսված փոփոխությունները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 2.3-րդ կետի «Թվայնացում» ենթաբաժնից (քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ավտոմատացում, թվայնացում, դրանց առցանց հասանելիության ապահովում, միասնական հաշվի ստեղծում, էլեկտրոնային աճուրդների ներդրում և այլն), 2.5-րդ կետից, քանի որ Նախագծերի փաթեթով նախատեսված փոփոխություններով նախատեսվում է խթանել նաև զբոսաշրջության աճին, 2.7-րդ կետից (Շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործումն ապահովող իրավական դաշտի շարունակական բարելավմանն ուղղված քայլերի ձեռնարկում, Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման գործառույթների իրականացման կայուն մեխանիզմների ներդրում), 6-րդ կետից (ինստիտուցիոնալ զարգացում՝ հանրային իշխանության բոլոր մարմինների կողմից խորքային բարեփոխումների կատարում), 6.6-րդ կետից (համայնքային ծառայության ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում՝ ուղղված համայնքային ծառայության ինստիտուտի դերի և տեղական ինքնակառավարման համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:)